

Ընկեր Մաթիկ չէր անդրադառնար, որ քանի մը ժամ առաջ, այդ ջախջախիչ պարսաւանքէն, խօսած էր նոյն այդ կուսակցութեան հասցէին, իր կնուցի օրուան պատմութիւնը տալու ատեն, խոր, անկեղծ, հաւատաւոր հիացումով մը: «Թիֆլիսից» մի վերնատուն: Համեստ: Քիչ կարասիներով: Վիպասան ծնած՝ անիկա իր տեսածները կը վերակազմէր մեծ հարազատութեամբ: «Մի վերնատուն», ուր «հաւաքուում» էին գլուխները Ս. Գործին: Հանգիստութիւնը Մոսկուայի մանսերտներուն կամ տավերծաններուն, որ անոր զգայարանքները կ'ընդարձակէր դէպի ապրուած զգայնութիւններուն փաստերը:

«Նոյն կողպ փեղկերը, այդ վերնատունին մէջ: Լոյսէ նոյն վախն ու փախուստը, քանի որ յեղափոխութիւնն ալ մօր մը նման արգանդի մէջ կը պատսպարէ իր զաւակները: Ու այդ վերնատան մէկ գրասեղանը, հասարակ սեղան, որ հրաշքով կը դառնար խորհրդատուներու կանանչ, դիւանագիտական դաշտը, վրան գիրքերու մարտկոցներով ու քարտէսներու արտերով: Նոյն աթոռները, միշտ փոշոտ, գունատ, երաժիշտ (յեղափոխականը թերեւս պիտի չմտածէ հանգստաւէտ պայմաններու, որոնք սովորական մարդոց երկրային, բայց անհրաժեշտ բարիքները կը դառնան տարիներու կրկնումով): Պատերուն՝ լուսանկարներ, կրկնադիմակ, որոնք աս ու ան լոյսին տակ կ'ըլլային ուրիշ: Իր օրուան առիթով, այդ լուսանկարները տուած էին իրենց սկզբնական կերպարանքներուն: Անոնց մէկ մասին վրայ հրազենները, ամէն տեսակի, քանի որ կուսակցութիւնը իր պահեստը ունէր երկու-երեք պետութիւններու հողերուն վրայ: Կուրծքեր, որոնք փամփուշտով հիւսուած էին, տառացի հարազատութեամբ մը: Երիտասարդներուն մէջքը կը գօտեպնդուէր անոնց կապերովը: Ուրիշներ՝ ոսկոր առ ոսկոր, որոնք մէկտեղուած ըլլան մորթի մը տակ: Բայց որոնց աչքերը այրէին սեւ խորքին վրայ թուղթէ այդ գերեզմանին: Անհուն, անհամար, անմոռա-